

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ՏԱՐՐԵՐԸ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ
ԽԱԶՄԵՐՈՒԿՈՒՄ

Տերմինաբանությանն առնչվող հարցերը ուսումնասիրության նյութ դարձնելը հաճախ քննադատության է արժանանում: Այնուամենայնիվ, գիտակարգերի փոխներթափանցումը և միջգիտակարգային, հստումնասիրությունները, որոնց հավելվում է գիտական տերմինաբանության թարգմանության խնդիրը, անխուսափելի են դարձնում որոշ գիտական եզրերի քննարկումն՝ ի նպաստ միջգիտակարգային ուսումնասիրությունների բառաֆոնդի համահունչ զարգացման:

Միջմշակութային հաղորդակցման գործընթացում լեզվական նշանային համակարգերի և համապատասխան մշակույթների շփումն անխուսափելիորեն հանգեցնում է միջմշակութային փոխառությունների: Փոխառությունները սովորաբար կատարվում են խոսքային մակարդակում և ապա ամրագրվում լեզվի շտեմարաններում: Պեռևս որպես փոխառություն չամրագրված տարրերն անվանելու համար ծագում է առանձին հասկացության տարրողշման անհրաժեշտություն, որը կվերաբերի միջմշակութային դիսկուրսում նկատվող լեզվամշակութային փոխներթափանցման դեպքերին: Խոսքը մասնավորապես վերաբերում է ոչ մայրենի լեզվով կամ լինգվա ֆրանկայով իրականացվող դիսկուրսում հանդիպող այն տարրերին, որոնք ըստ ծագման և կառուցվածքի ներհատուկ են խոսողի մայրենի լեզվամշակույթին:

Սույն հոդվածում քննարկման առարկա է օտար լեզվի կամ լինգվա ֆրանկայի խոսքային մակարդակում արտահայտվող լեզվական անճշտությունները, որոնք բխում են խոսողի լեզվամշակութային հենքի ազդեցություններից: Խոսքը գնում է լեզվական համակարգի և արտալեզվական իրականության հետ կապված մշակութային պայմանավորվածություն ունեցող տարրերի մասին: Ցանկացած լեզվակիր հանրության ներկայացուցիչ որևէ լեզու (այսօր՝ անգլերենը) որպես երկրորդ օտար կամ միջազգային հաղորդակցման լեզու գործածելիս ներմուծում է ա) իր լեզվական նշանային համակարգի տարրերը, բ) իր մշակույթի տարրերը: Վերջինս ևս ենթակա է բաժանումների, որտեղ վերլուծության նպատակներից էլնելով, անհրաժեշտ է առանձնացնել մենամշակույթի, խմբամշակույթի և համրամշակույթի մակարդակները (Schaffner, 2003, 79-

107)¹: Մենամշակույթի սահմաններում է, օրինակ, անհատի խոսքը, ինչպես նաև այն ամենն, ինչ անհատը արտացոլում է խմբամշակույթի և հանրամշակույթի մակարդակներից: Խմբամշակույթը և հանրամշակույթը համապատասխանաբար սոցիալական կամ մասնագիտական պատկանելության և ազգային մշակույթի մակարդակներն են: Դրանց հատուկ տարրերը, անհատի դաստիարակության, կրթության և կրթվածության աստիճանի, նախասիրությունների և այլ հանգամանքների ներքո պարբերաբար դրսևորվում են նրա մենամշակույթի մակարդակում: Օրինակ, մաթեմատիկոսը, որն իր առօրյա խոսքում հաճախակի կիրառում է *թեորեմ*, *դիցուկ*, *անալիզ*, *հաշվարկ* և այլ մասնագիտական եզրեր, մասնագիտական՝ այսինքն խմբամշակութային մակարդակի տարրերը պրոեկտում է մենամշակութային մակարդակ:

Մշակութային մակարդակները փոխադարձ կապի մեջ են: Մենամշակութային մակարդակի մշակութային պայմանավորվածություն ունեցող տարրերը կարող են փոխանցվել ամենալայն՝ հանրամշակութային մակարդակ: Սրա օրինակ է ցանկացած հեղինակի կամ անհատի կողմից ստեղծված նորաբանությունը, որը հետագայում լայն գործածություն է ստանում և նույնիսկ ամրագրվում բառարաններում:

Եթե խոսքը գնում է զուտ լեզուների տիպաբանական համեմատության մասին, ապա կարելի է թերևս սահմանափակվել լեզվական համակարգերի համեմատական վերլուծությամբ, սակայն, օրինակ, անգլերենը որպես միջազգային հաղորդակցման լեզու ուսումնասիրելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև օտար մշակութային պայմանավորվածություն ունեցող խոսքին, որն ի վերջո զախի է ձևավորելու անգլերենի միջազգայնացված տարրերակի մի մասը (Santipolo, 2006, 105-119):

Խոսքային մակարդակում արտացոլվում են ոչ միայն ոչ անգլախոս անհատի զուտ մշակութային հենքը, այլև լեզվախոսքային առանձնահատկությունները, որ կան իր մայրենիում: Այսպես, պարզ պատկերելով ասվածը, կարելի է հաղորդակցման թեմատիկ ընտրությունը դասակարգել որպես զուտ մշակութային հենքից բխող առանձնահատկություն, իսկ խոսքի կառուցման, ասելիքի ձևակերպման և խոսքն ուղեկցող միջոցների ընտրությունն ու ժեստերը կապել լեզվախոսքային մշակութային հենքի հետ: Հետևաբար, օտար լեզվով կամ լինգվա ֆրանկայով կառուցվող խոսքում պետք է առանձնացնել ա) արտալեզվական մշակութային պայմանավորվածություն ունեցող տարրեր (այսուհետ՝ արտալեզվական ՄՊՏ) և բ) լեզվական մշակութային պայմանավորվածություն ունեցող տարրեր (լեզվական ՄՊՏ):

Այս բաժանումն անհրաժեշտ ենք համարում, քանի որ խոսքային հաղորդակցման մակարդակում գործ ունենք գործոնների այնպիսի համախմբի հետ, որը ձևավորված է լեզվական և արտալեզվական իրականությունների համադրության միջոցով: Այսպես, կենդանի շփումը արտացոլում է ոչ միայն զուտ լեզվական նյութի ընտրությունը, այլև այն բոլոր մշակութային արժեքները, ժամանակային և տարածական հարաբերությունների գիտակցման եղանակը, ժեստային, հարալեզվական միջոցները և տվյալ հասարակության կողմից ընդունված հաղորդակցական նորմերը, որոնք որոշակիորեն ձևավորում են հաղորդակցական գործողությանը (Головнева, 2008, 111-114):

Արտալեզվական ՄՊՏ-ները միջմշակութային հաղորդակցման մեջ արտացոլում են անհատի ներկայացրած մշակութային գիտակցությունը և ենթագիտակցությունը: Արտալեզվական ՄՊՏ-ների հիմքը մշակութային առանձնահատկությունների (մենա-, խմբա- և հանրամշակութային մակարդակների) մեջ է: Ինչ խոսք, երեք մշակութային մակարդակների մասին այստեղ ևս պետք է խոսել, սակայն խոսքային հաղորդակցման գործողությունների ուսումնասիրման շրջանակում: Որպես արտալեզվական ՄՊՏ կարելի է դիտարկել այն արտալեզվական իրավությունները, որոնք բարդություններ են առաջացնում երկու մշակույթների միջև համարժեքության հաստատման գործընթացում. օրինակ՝ սկզբնաղբյուր մշակույթի որևէ առարկայի, երևույթի կամ կերպարի բացակայությունը թիրախ մշակույթում: Դրանք լեզվախոսքային մակարդակում սովորաբար արտացոլվում են խոսքային որոշակի նորմերի, իրադրությանը համապատասխան խոսքային վարքի, թեմայի ընտրության, պատշաճության գիտակցման աստիճանի, ինչպես նաև մշակութային առումով ինքնատիպ կադապրոնների միջոցով. որոնք խնդիր են առաջացնում նաև թարգմանչի համար:²

Լեզվական ՄՊՏ-ները պայմանավորված են լեզվական նշանային համակարգերի ներակա տվյալներով և բնույթով: Լեզվական ՄՊՏ-ներն ի հայտ են գալիս անհատի կողմից խոսքային մակարդակում երկու տարբեր լեզվական նշանային համակարգերի գիտակցված կամ չգիտակցված համադրության արդյունքում. Օրինակ, թիրախ լեզվամշակույթում սեռի քերականական կարգի բացակայությունը տվյալ կարգն ունեցող սկզբնաղբյուր լեզվամշակույթից թարգմանություն կատարողի բանավոր կամ գրավոր խոսքում կարող է ՄՊՏ-ի առաջացման պատճառ դառնալ: Հետևաբար, լեզվական ՄՊՏ-ները «երևակվում են» երկու լեզվական նշանային համակարգերի շփման դաշտում (օրինակ՝ երբ անհատը հաղորդակցվում է ոչ մայրենի լեզվով): Միջմշակութային շփումը անխուսափելիորեն ներառում է թարգմանական մեխանիզմների գործառնություն,

քանզի երկու տարբեր մշակութային նշանային համակարգերի շփման դեպում միմյանցից տարբերվող սեմիոսֆերաները շփվում են օտար մշակութային տարրերի յուրացմանը ծառայող եզրային մեխանիզմների միջոցով (Лотман, 1984, 10)³:

Թարգմանաբանության մեջ «ՄՊՏ» երևույթի քննությունը տեղին կլինի այնքանով, որ հենց թարգմանական մեխանիզմների միջոցով են երկու տարբեր մշակութային հենքեր ներկայացնող անհատները լինզվա ֆրանկայով հաղորդակցվելիս այդ լեզու ներմուծում իրենց լեզվամշակույթի կառուցվածքային առանձնահատկություններն ու կաղապարները: Ժան-Պոլ Վինեյի և Դարբեյնի կողմից առանձնացված *թարգմանական ընթացակարգերը* (Gabrielyan, 2002, 129-133) այն հիմնական մեխանիզմներն են, որոնք գործում են ՄՊՏ-ների հիմքում. Բացի այդ, օտար լեզվի կիրառությունը կրում է մայրենիի ազդեցությունը, ինչը հատկապես անխուսափելի է շարահյուսական և միկրոշարահյուսական մակարդակներում (Clahsen & Felser, 2006):

Ստացվում է, որ մշակութային պայմանավորվածություն ունեցող տարրերն ի հայտ են գալիս երկու լեզվական նշանային համակարգերի շփման դաշտում՝ թարգմանական մեխանիզմների գործարկման հետևանքով: Եթե նշանային համակարգերը դիտարկենք որպես նշանային ոլորտներ (Լոտմանի խոսքով՝ սեմիոսֆերաներ), ապա ՄՊՏ-ների մասին կարելի է խոսել նաև նշանագիտական ուսումնասիրությունների շրջանակներում, քանի որ դրանք ի հայտ են գալիս միջմշակութային հաղորդակցման դաշտում՝ խոսքային մակարդակում երկու սեմիոսֆերաների փոխազդեցության և փոխներթուփումից ու հետևանքով:

Խոսքային մակարդակում ՄՊՏ-ների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել խոսքաստեղծման վրա ազդող բոլոր հնարավոր հանգամանքները, ինչպես, օրինակ *lingua fra* լինզվա ֆրանկայի նյութի դեպքում՝

- լեզվական նշանային համակարգի ոչ մայրենի լինելը, ինչպես նաև հաղորդակցվողի մայրենի լեզվի ազդեցությունը
- հաղորդակցվող կողմերի առնվազն մեկ ոչ րնդիանուր մշակութային մակարդակին պատկանելը (հաղորդակցվողները կարող են տարբեր հանրամշակութային, սակայն միևնույն խմբամշակութային հենքն ունենալ, օրինակ՝ եթե երկուսն էլ ունեն նույն մասնագիտությունը, սակայն տարբեր ազգությունների ներկայացուցիչներ են), ինչպես նաև յուրաքանչյուր հաղորդակցվողի վերոհիշյալ մշակութային հենքի ազդեցությունները

- կողմերի մոտ անհրաժեշտ թարգմանական գործողության համար առկա լեզվամշակութային իմացությունը կամ ձեռքբերված հմտությունները
- հաղորդակցման տեսակը՝ անմիջական թե միջնորդավորված, ինչպես նաև ժանրային առանձնահատկությունները, մշակութային ենթատեքստը և այլն:

Խոսքում ՄՊՏ-ների ուսումնասիրությունը կարելի է կատարել լեզվաբանական վերլուծության մի քանի տարբեր մակարդակներում՝ հնչյունական, ձևաբանական-բառակազմական, շարահյուսական և իմաստային-պրագմատիկ⁴: Այսպես, եթե հնչյունական մակարդակում խոսքը գլխավորապես պետք է գնա օտար մշակութային հենքի ազդեցությամբ առաջացող արտասանական յուրահատկությունների՝ ակցենտի մասին, ապա բառակազմական, շարահյուսական մակարդակներում դիտարկման առարկա են խոսողի կողմից որոշակի լեզվական միջոցների և կառույցների ընտրությունը, մինչդեռ իմաստային-պրագմատիկ մակարդակում՝ վերջիններիս իմաստային ազդեցությունը հաղորդակցման գործընթացի վրա, ինչպես նաև ժեստերի լեզվի կիրառումը և ժամանակային-տարածական հարաբերությունների ընկալումը միջմշակութային հաղորդակցման համատեքստում (Busa, 1987, p 32):

Մշակութային պայմանավորվածություն ունեցող տարրերի վերոհիշյալ բաժանումը պարզաբանելու նպատակով փորձենք դասակարգել Բալբոնիի միջմշակութային հաղորդակցման տիրապետման մոդելի բաղկացուցիչ տարրերը (Balboni, 2006, 16): Բալբոնիի առանձնացրած *վերբալ կոդերը* կարելի է դասակարգել որպես լեզվական ՄՊՏ-ների հիմք, իսկ *հիմնարար մշակութային արժեքները*⁵ որպես արտալեզվական ՄՊՏ-ների առաջացման պատճառ: Միջանկյալ դիրք են զբաղեցնում *ոչ վերբալ կոդերը* (ա. արտահայտություններ, ժեստեր, բուրմունք, մարմնի արձակած ծայներ, բ. հեռավորություն հաղորդակցվողների մարմինների միջև գ. առարկաներ, հագուստներ, կարգավիճակի ցուցիչներ (status symbols)), որոնցից մի քանիսը (արտահայտություններ, ժեստեր) կարելի է, որպես հարալեզվական միջոցներ դիտարկելով, դասել լեզվական ՄՊՏ-ների, իսկ մյուսները՝ արտալեզվական ՄՊՏ-ների շարքին:

Այսպիսով, մշակութային և հատկապես լեզվամշակութային երևույթների դիտարկումը մշակութային պայմանավորվածություն ունեցող տարրերի գիտակցմամբ կարող է լայն հնարավորություններ բացել միջգիտակարգային ուսումնասիրություններում՝ նոր հայեցակետեր ձևավորելով արդեն ուսումնասիրված խնդիրների շուրջ ինչպես լեզվաբանության, այնպես էլ թարգմանաբանության, միջմշակութային ուսումնասիրությունների և մշակութային նշանագիտության մեջ:

Ծանոթագրություններ

¹ Նշված եզրույթները առաջարկվում են որպես անգլերեն *idioculture*, *diaculture* և *paraculture* եզրույթների հայերեն տարբերակներ:

² "the translator must sometimes deal with texts containing proverbs, verses, historical incidents long forgotten, legendary personages, names of places, animals, plants, etc that are peculiar only to a specific culture" *Adel Salem Bahameed, Hindrances in Arabic-English Intercultural Translation* © Copyright *Translation Journal* and the Author 2007 URL: <http://translationjournal.net/journal/43culture.htm>

Last updated on: 01/03/2008 01:28:20

³ "[...] все механизмы перевода, обслуживающие внешние контакты, принадлежат к структуре границы семиосферы. Общая граница семиосферы пересекается границами частных культурных пространств", стр.10

⁴ Մշակութային պայմանավորվածություն ունեցող տարրերը «խոչընդոտներ» անվանելով Բահամիզը դիտարկում է դրանք արաբերեն-անգլերեն թարգմանության դիտանկյունից և դասակարգում դրանք չորս խմբի: "one may classify the main hindrances of translation, which affect the quality of the translation outcome into: lexical hindrances, prosodic hindrances, structural hindrances, and cultural hindrances." *Adel Salem Bahameed, Hindrances in Arabic-English Intercultural Translation* © Copyright *Translation Journal* and the Author 2007 URL: <http://translationjournal.net/journal/43culture.htm> Last updated on: 01/03/2008 01:28:20

Գրականություն

1. Головлева Е. Л. *Основы Межкультурной Коммуникации*, "Феникс", Ростов-на-Дону, 2008
2. Лотман Ю. М. О Семиосфере // Структура диалога как принцип работы семиотического механизма; Труды по знаковым системам XVII, Выпуск 641, Тарту, 1984
3. *Adel Salem Bahameed, Hindrances in Arabic-English Intercultural Translation* © Copyright *Translation Journal* and the Author, <http://translationjournal.net/journal/43culture.htm>, 2007
4. Balboni Paolo, E. *Intercultural Communicative Competence: A Model*, English Translation: David Newbold, Guerra Edizioni, Perugia, 2006
5. Clahsen H. & Felser C., How Native-Like is Non-Native Language Processing? // *Trends in Cognitive Sciences* 10: 564-570, Elsevier Ltd. University of Essex, 2006
6. Busa R. .s.j. *Fondamenti di informatica linguistica*, Vita e Pensiero – Largo A. Gemelli, Milano, 1987
6. Santipolo M., *Le varietà dell'inglese contemporaneo*, Carocci Editore S.p.A., Roma, 2006
7. Schaffner Ch. Translation and Intercultural Communication: Similarities and Differences // *Studies in Communication Sciences* 2003, 3/2: 79-107
8. Vinay J. P. and Darbelnet J. *Translation Procedures* // *Translation Studies Reader* / Ed. by S. Gabrielyan, Yerevan: Sahak Partev hrat., 2002, 129-133